ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

15 ապրիլի 2016 թվականի N 383 - Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ 2016/2017 ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐՎԱ ԱՍՊԻՐԱՆՏՈՒՐԱ ՈՒ ԴՈԿՏՈՐԱՆՏՈՒՐԱ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅԱՆ ՏԵՂԵՐԸ ԵՎ ԱՌԿԱ ՈՒՍՈՒՑՄԱՄԲ ԱՍՊԻՐԱՆՏՈՒՐԱ ՈՒ ԴՈԿՏՈՐԱՆՏՈՒՐԱ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅԱՆ ՏԵՂԵՐԻ ԲԱՇԽՈՒՄԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«Կրթության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 28-րդ հոդվածի 6-րդ մասին ու «Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի 2-րդ մասի 6-րդ կետին համապատասխան՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը ո ր ո շ ո ւ մ է.

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության 2016/2017 ուսումնական տարվա՝

1) ասպիրանտուրա ընդունելության տեղերը՝

ա. պետական կրթաթոշակով, նպաստի ձևով ուսման վճարի փոխհատուցմամբ, առկա ուսուցմամբ՝ 144 տեղ՝ պարտադիր զինվորական ծառայության զորակոչից տարկետման իրավունքով,

բ. նպաստի ձևով ուսման վճարի փոխհատուցմամբ, հեռակա ուսուցմամբ՝ 228 տեղ,

գ. պետական կրթաթոշակով, նպաստի ձևով ուսման վճարի փոխհատուցմամբ, միջպետական համաձայնագրերով՝ 20 տեղ.

2) օրդինատուրա ընդունելության տեղերը՝ պետական կրթաթոշակով, նպաստի ձևով ուսման վճարի փոխհատուցմամբ՝ 95 տեղ.

3) Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարության համար նախատեսված ինտերնատուրա ընդունելության տեղերը՝ պետական կրթաթոշակով, նպաստի ձևով ուսման վճարի փոխհատուցմամբ՝ 12 տեղ.

4) դոկտորանտուրա ընդունելության տեղերը՝ պետական կրթաթոշակով, նպաստի ձևով ուսման վճարի փոխհատուցմամբ՝ 13 տեղ:

2. Հաստատել Հայաստանի Հանրապետության 2016/2017 ուսումնական տարվա առկա ուսուցմամբ ասպիրանտուրա ու դոկտորանտուրա ընդունելության տեղերի բաշխումը՝ համաձայն հավելվածի:

3. Սահմանել, որ՝

1) Հայաստանի Հանրապետությունում 2016/2017 ուսումնական տարվա ասպիրանտուրայի առկա և հեռակա, ինչպես նաև օրդինատուրայի ընդունելության ուսուցմամբ թափուր մնացած տեղերը բարձրագույն ուսումնական հաստատություններում ու գիտական կազմակերպություններում վերաբաշխում է Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարությունը՝ համաձայն Հայաստանի Հանրապետության գիտությունների ազգային ակադեմիայի, Հայաստանի Հանրապետության բարձրագույն ուսումնական հաստատությունների և գիտական կազմակերպությունների ներկայացրած լրացուցիչ հայտերի՝ իրենց տրամադրված տեղերի շրջանակներում.

2) Հայաստանի Հանրապետությունում 2016/2017 ուսումնական տարվա ասպիրանտուրայի ընդունելության առկա և հեռակա, ինչպես նաև օրդինատուրայի ուսուցմամբ պահուստային տեղերի բաշխումը վերապահվում է Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարությանը.

3) Հայաստանի Հանրապետությունում 2016/2017 ուսումնական տարվա ասպիրանտուրայի հեռակա և օրդինատուրայի ընդունելության տեղերը բաշխում և հաստատում է Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարությունը:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏ Հ. ԱԲՐԱՀԱՄՅԱՆ

2016 թ. ապրիլի 20
Երևան

Հավելված
ՀՀ կառավարության 2016 թվականի
ապրիլի 15-ի N 383 - Ն որոշման

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ 2016/2017 ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐՎԱ ԱՌԿԱ ՈՒՍՈՒՑՄԱՄԲ
ԱՍՊԻՐԱՆՏՈՒՐԱ ՈՒ ԴՈԿՏՈՐԱՆՏՈՒՐԱ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅԱՆ ՏԵՂԵՐԻ ԲԱՇԽՈՒՄԸ

NN ը/կ	Բուհը, գիտական կազմակերպությունը	Գերատեսչական պատկանելությունը	Մասնա-գիտության դասիչը	Մասնագիտությունը	2016-2017 թթ.	
					ասպիրան-տուրա	դոկտո-ռան-տուրա
1.	Երևանի պետական համալսարան	ՀՀ կրթության և գիտության նախարարություն	Ա.01.01	Մաթեմատիկական անալիզ	1	
			Ա.01.02	Դիֆերենցիալ հավասարումներ, մաթեմատիկական ֆիզիկա	1	
			Ա.01.06	Հանրահաշիվ և թվերի տեսություն	1	
			Ա.01.07	Հաշվողական մաթեմատիկա	1	
			Ա.01.09	Մաթեմատիկական կիբեռնետիկա և մաթեմատիկական տրամաբանություն	1	
			Ա.02.04	Դեֆորմացվող պինդ մարմնի մեխանիկա	1	
			Ա.04.02	Տեսական ֆիզիկա	1	
			Ա.04.03	Ռադիոֆիզիկա	1	
			Ա.04.10	Կիսահաղորդիչների ֆիզիկա	1	
			Ա.04.21	Լազերային ֆիզիկա	1	
			Բ.00.04	Ֆիզիկական քիմիա	1	
			Գ.00.14	Կենսատեխնոլոգիա	1	
			Ե.13.04	Հաշվողական մեքենաների, համալիրների, համակարգերի և ցանցերի մաթեմատիկական և ծրագրային ապահովում (2 տեղը ՏՏ կենտրոն)	3	
			Ե.27.01	Էլեկտրոնիկա, միկրո և նանոէլեկտրոնիկա (1 տեղը ՍԻՆՈՓՍԻՍ)	2	
			Է.00.01	Հայոց պատմություն	2	
			Է.00.02	Համաշխարհային պատմություն	1	
			Ը.00.06	Միջազգային տնտեսագիտություն	1	
			Ը.00.08	Մաթեմատիկական տնտեսագիտություն (1 տեղը մաթեմատիկայի և մեխանիկայի ֆակուլտետի համար)	3	
			Թ.00.06	Մշակութաբանություն	1	
			Ժ.02.01	Հայոց լեզու	1	

			Ժ.02.06	Ասիայի հին և նոր լեզուներ	1	
			ԺԲ.00.02	Հանրային իրավունք	1	
			ԺԲ.00.03	Մասնավոր իրավունք	1	
			ԺԲ.00.04	Դատական իրավունք	2	
			ԻԳ.00.02	Քաղաքական ինստիտուտներ և գործընթացներ	1	
			ԻԴ.01.01	Ընդհանուր երկրաբանություն	1	
			ԻԴ.01.08	Երկրաֆիզիկա, օգտակար հանածոների որոնման մեթոդներ	1	
			ԻԴ.03.02	Տնտեսական, սոցիալական և քաղաքական աշխարհագրություն (ղեկտորանտուրա՝ պաշտպանության նախարարություն)	1	1
			ԻԵ.00.01	Կրոնի տեսություն և պատմություն (կրոնագիտություն)	1	
	Ընդամենը				36	1
2.	Հայաստանի ազգային պոլիտեխնիկական համալսարան	ՀՀ կրթության և գիտության նախարարություն	Ա.01.02	Դիֆերենցիալ հավասարումներ, մաթեմատիկական ֆիզիկա	1	
			Ե.02.01	Մեքենագիտություն	1	
			Ե.02.03	Մեքենաշինական արտադրության տեխնոլոգիաներ և սարքավորումներ	1	
			Ե.09.01	Էլեկտրամեխանիկա և էլեկտրական ապարատներ, էլեկտրամեխանիկական համակարգեր և դրանց կառավարումը	1	
			Ե.12.02	Ատոմներ, գերբարձր հաճախականության սարքավորումներ և տեխնոլոգիաներ	-	1
			Ե.12.03	Հեռահաղորդակցական սարքեր, սարքավորումներ և համակարգեր	1	
			Ե.13.01	Կառավարում, կառավարման համակարգեր և դրանց տարրերը	1	
			Ե.13.02	Ավտոմատացման համակարգեր (ՍԻՆՈՓՍԻՍ)	1	
			Ե.13.04	Հաշվողական մեքենաների, համալիրների, համակարգերի և ցանցերի մաթեմատիկական և ծրագրային ապահովում	1	
			Ե.14.02	Միջուկային էներգետիկ տեղակայանքներ	1	
			Ե.14.03	Ջերմաէներգետիկա	1	
			Ե.17.01	Անօրգանական նյութերի տեխնոլոգիա	1	
			Ե.27.01	Էլեկտրոնիկա, միկրո և նանոէլեկտրոնիկա (ՍԻՆՈՓՍԻՍ)	1	
			Ը.00.02	Տնտեսություն, նրա ոլորտների տնտեսագիտություն և կառավարում	1	
			ԻԴ.02.01	Օգտակար հանածոների հանքավայրերի մշակում և շահագործում	1	
			ԻԴ.04.01	Երկրաբնապահպանություն	1	
	Ընդամենը				15	1
3.	Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարան	ՀՀ կրթության և գիտության նախարարություն	Ը.00.01	Ընդհանուր տնտեսագիտություն (տեսական տնտեսագիտություն)	1	
			Ը.00.02	Տնտեսության, նրա ոլորտների տնտեսագիտություն և կառավարում (գործարար կառավարում, կոմերցիա և բիզնեսի կազմակերպում, բնօգտագործման տնտեսագիտություն)	3	

			Ը.00.03	Ֆինանսներ, հաշվապահական հաշվառում (ֆինանսներ, ֆինանսական հաշվառում)	2	
			Ը.00.06	Միջազգային տնտեսագիտություն	1	
			Ը.00.08	Մաթեմատիկական տնտեսագիտություն	1	
	Ընդամենը				8	
4.	Հայաստանի ազգային ագրարային համալսարան	ՀՀ կրթության և գիտության նախարարություն	Ե.18.01	Բուսական ծագման մթերքների վերամշակման և արտադրության տեխնոլոգիա	1	
			Ե.18.08	Գյուղատնտեսության և սննդարդյունաբերության տեխնոլոգիաների գործընթացներ և դրանց կառավարումը, ապրանքագիտություն	1	
			Ե.20.01	Գյուղատնտեսության արտադրության մեքենայացում և մեքենաներ	1	
			Ե. 23.03	Շենքերի և կառույցների ճարտարագիտական ապահովում (հիդրոտեխնիկական)	1	
			Զ.01.01	Ընդհանուր երկրագործություն, հողագործություն, ագրոքիմիա	1	
			Ը.00.02	Տնտեսության, նրա ոլորտների տնտեսագիտություն և կառավարում (ագրարային)	1	
			Ը.00.03	Ֆինանսներ, հաշվապահական հաշվառում	1	
	Ընդամենը				7	
5.	Երևանի Մ. Հերացու անվան պետական բժշկական համալսարան	ՀՀ կրթության և գիտության նախարարություն	ԺԵ.00.01	Դեղագիտություն	1	
			ԺԴ.00.03	Ներքին հիվանդություններ	1	
			ԺԴ.00.18	Քթի, կոկորդի և ականջի հիվանդություններ	1	
			ԺԴ.00.21	Ուրոլոգիա	1	
	Ընդամենը				4	
6.	Ճարտարապետության և շինարարարության Հայաստանի ազգային համալսարան	ՀՀ կրթության և գիտության նախարարություն	Ե.23.01	Շինարարական կոնստրուկցիաներ, շենքեր, կառույցներ և շինարարական նյութեր	1	
			Ե.23.02	Քաղաքացիական, արդյունաբերական, հիդրոտեխնիկական, տրանսպորտային և ստորգետնյա շինարարություն	1	
			Ե.23.03	Շենքերի և կառույցների ճարտարագիտական (էներգետիկ, հիդրավլիկ և այլն) ապահովում	1	
			ԺԸ.00.01	Ճարտարապետություն	2	
	Ընդամենը				5	
7.	Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարան	ՀՀ կրթության և գիտության նախարարություն	ԺԳ.00.01	Մանկավարժության տեսություն և պատմություն	1	
			ԺԹ.00.01	Ընդհանուր հոգեբանություն, հոգեբանության տեսություն և պատմություն, անձի հոգեբանություն	1	
	Ընդամենը				2	
8.	Երևանի Վ. Բրյուսովի անվան պետական լեզվահասարակագի-տական համալսարան	ՀՀ կրթության և գիտության նախարարություն	Ժ.02.07	Գերմանական լեզուներ (անգլերեն)	1	
			Ժ.02.08	Ռոմանական լեզուներ (ֆրանսերեն)	-	1
	Ընդամենը				1	1

9.	Ֆիզիկական կուլտուրայի հայկական պետական ինստիտուտ	ՀՀ կրթության և գիտության նախարարություն	ԺԳ.00.02	Դասավանդման և դաստիարակության մեթոդիկա (ըստ բնագավառների) (Պաշտպանության նախարարություն)	-	1
	Ընդամենը					1
10.	Եվրոպական կրթական տարածաշրջանային ակադեմիա		ԺԲ.00.02	Հանրային իրավունք	1	
			Ե.13.02	Ավտոմատացման համակարգեր	1	
	Ընդամենը				2	
11.	Հայ-Ռուսական (Սլավոնական) համալսարան				15	1
	Ընդամենը				15	1
12.	Հայաստանի Հանրապետության պետական կառավարման ակադեմիա	ՀՀ Նախագահի աշխատակազմ	Ը.00.02	Տնտեսության, նրա ոլորտների տնտեսագիտություն և կառավարում	2	
			ԺԲ.00.02	Հանրային իրավունք	1	1
			ԺԹ.00.01	Ընդհանուր հոգեբանություն, հոգեբանության տեսություն և պատմություն, անձի հոգեբանություն	1	
	Ընդամենը				4	1
13.	Ա. Ալիխանյանի անվան Ազգային գիտական լաբորատորիա (Երևանի ֆիզիկայի ինստիտուտ)		Ա.04.02	Տեսական ֆիզիկա	1	
			Ա.04.16	Միջուկի, տարրական մասնիկների և տիեզերական ճառագայթների ֆիզիկա	1	
	Ընդամենը				2	
14.	«ՔԵՆԴԼ» սինքրոտրոնային հետազոտությունների ինստիտուտ		Ա.04.20	Լիցքավորված մասնիկների փնջերի ֆիզիկա և արագացուցչային տեխնիկա	1	
	Ընդամենը				1	
15.	Մնդամթերքի անվտանգության ոլորտի ռիսկերի գնահատման և վերլուծության գիտական կենտրոն	ՀՀ գյուղատնտեսության նախարարություն	ԺԶ.00.03	Կենդանիների վարակիչ հիվանդություններ, սանիտարական փորձաքննություն, զոոհիգիենա	1	
	Բանջարաբոստանային և տեխնիկական մշակաբույսերի գիտական կենտրոն		Զ.01.02	Բուսաբուծություն	-	1
	«Երկրագործության գիտական կենտրոն» ՊՈԱԿ		Զ.01.01	Ընդհանուր երկրագործություն, հողագիտություն, ագրոքիմիա	-	1
	Ընդամենը				1	2
16.	Էներգետիկայի գիտահետազոտական ինստիտուտ	ՀՀ էներգետիկայի և բնական պաշարների նախարարություն	Ե.14.01	Էներգետիկ համակարգեր, համալիրներ, էլեկտրակայաններ և դրանց կառավարումը	1	
	Ընդամենը				1	

17.	Մաթեմատիկայի ինստիտուտ	ՀՀ գիտությունների ազգային ակադեմիա	Ա.01.01	Մաթեմատիկական անալիզ	1	
	Մեխանիկայի ինստիտուտ		Ա.02.04	Դեֆորմացվող պինդ մարմնի մեխանիկա	1	
	Կենդ. և հիդրոէկոլ. գիտական կենտրոն		Գ.00.08	Կենդանաբանություն	1	
	Ինֆորմատիկայի և ավտոմատացման պրոբլեմների ինստիտուտ		Ե.13.04	Հաշվողական մեքենաների, համալիրների, համակարգերի և ցանցերի մաթեմատիկական և ծրագրային ապահովում	1	
			Ե.13.05	Մաթեմատիկական մոդելավորում, թվային մեթոդներ և ծրագրերի համալիրներ	1	
	Բյուրականի աստղադիտարան		Ա.03.02	Աստղաֆիզիկա, ռադիոաստղագիտություն	1	
	ԻԿՐԱՆԵՏ կենտրոն		Ա.03.02	Աստղաֆիզիկա, ռադիոաստղագիտություն	1	
	Գրականության ինստիտուտ		Ժ.01.01	Հայ դասական գրականություն	-	1
	Ֆիզիկական հետազոտությունների ինստիտուտ		Ա.04.05	Օպտիկա	1	
			Ա.04.21	Լազերային ֆիզիկա	1	
	Ռադիոֆիզիկայի և էլեկտրոնիկայի ինստիտուտ		Ա.04.03	Ռադիոֆիզիկա	2	
			Ա.04.10	Կիսահաղորդիչների ֆիզիկա	1	
	Ֆիզիկայի կիրառական պրոբլեմների ինստիտուտ		Ա.04.06	Ակուստիկա	1	
			Ա.04.07	Կոնդենսացված վիճակի ֆիզիկա	1	
	ԸԱՔԻ		Բ.00.01	Անօրգանական քիմիա	1	
	Երկրաբանական գիտությունների ինստիտուտ		ԻԴ.01.01	Ընդհանուր երկրաբանություն	1	
			ԻԴ.01.08	Երկրաֆիզիկա, օգտակար հանածոների որոնման երկրաֆիզիկական մեթոդներ	1	1
	Կենսաքիմիայի ինստիտուտ		Գ.00.04	Կենսաքիմիա	1	
	Բուսաբանության ինստիտուտ		Գ.00.05	Բուսաբանություն	1	
	Հայկենսատեխնոլոգիա ԳԱԿ		Գ.00.14	Կենսատեխնոլոգիա	1	
	Ֆիզիոլոգիայի ինստիտուտ		Գ.00.09	Մարդու և կենդանիների ֆիզիոլոգիա	1	1
	Պատմության ինստիտուտ		Է.00.01	Հայոց պատմություն (նոր և նորագույն)	-	1
			Է.00.05	Պատմագրություն, աղբյուրագիտություն (հին և միջնադարյան հայոց պատմություն)	1	
	Արևելագիտության ինստիտուտ		Է.00.02	Համաշխարհային պատմություն (օսմանագիտություն, կովկասագիտություն)	1	
	Հնագիտության և ազգագրության ինստիտուտ		Է.00.04	Ազգագրություն (ազգաբանություն)	1	
	Արվեստի ինստիտուտ		ԺԷ.00.03	Կերպարվեստ. դեկորատիվ և կիրառական արվեստ, դիզայն	1	
	Տնտեսագիտության ինստիտուտ		Ը.00.02	Տնտեսության, նրա ոլորտների տնտեսագիտություն և կառավարում	1	
			Ը.00.03	Ֆինանսներ, հաշվապահական հաշվառում	1	
	Լեզվի ինստիտուտ		Ժ.02.01	Հայոց լեզու (լեզվի պատմ. բար- բառագ. ժամանակ. հայոց լեզու)	1	
	Փիլիսոփայության, սոցիոլոգիայի և իրավունքի ինստիտուտ		ԺԲ.00.01	Պետության և իրավունքի տեսություն և պատմություն, պետական և իրավական ուսմունքների պատմություն	2	
			ԻԲ.00.01	Պետության և իրավունքի տեսություն և պատմություն, պետական և իրավական ուսմունքների պատմություն	-	1
	Ցեղասպանության թանգարան-ինստիտուտ		Է.00.01	Հայոց պատմություն	1	
	Ընդամենը				31	5

18.	Մատենադարան Մ. Մաշտոցի անվան հին ձեռագրերի գիտահետազոտական ինստիտուտ		Է.00.01	Հայոց պատմություն	1	
			Է.00.05	Պատմագրություն, աղբյուրագիտություն	1	
	Ընդամենը				2	
19.	Հայաստանում ֆրանսիական համալսարան		Ը.00.02	Տնտեսության, նրա ոլորտների տնտեսագիտություն և կառավարում	1	
Ընդամենը					1	
Պահուստային տեղեր					6	
Ընդամենը					144	13

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ-ՆԱԽԱՐԱՐ ԴԻ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ